

ՀՈԳԵՇՆՈՐՉ Տ. ՀՈՒՄԻԿ ԱԲԵՂԱ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ

Հոգեշնորչ Տ. Հումիկ արեղա Սանթուրչյանը, ավազանի անոնով Ազատ, ծնվել է 1920 թվականի հոկտեմբերի 17-ին Ահրասահիայս (Բյուրքիա), հողագործի ընտանիքում:

Մանուկ Հասակից կորցրել է ծնողներին և որպես որր ընդունվել է Գանիացի օրինադրությամբ Մարիա Յագուստոսի կողմից զեկավարված Քիրեյլի (Կիրանան) «Թաշնոց բույն» որրանոցում, որտեղ ստացել է իր նախնական կրթությունը և 1935 թվականին ավարտել զարդարի յոթհամյա դպրությունը:

Այնուհետև ուսումը շարունակել է երուսաղեմի գերմանական

Ծննդեր ավետարանական երկրորդական Տեր-Հովհաննիսյանի ձեռքով և վերանվանվել վարժարանում, որն ավարտել է 1939 թվականին:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, Ազատը 1939—1945 թվականների Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին աշխատել է զանազան հիմնարկներում որպես անդերենի թարգման և քարտուղար:

1946—1947 թվականների Հայրենադարձի օքերին աշխատել է Թեյրութի ներգովորի կոմիտեում:

1947 թվականի նոյեմբերի վերջերին ներգաղթել է Սովետական Հայաստան և 1948—



1953 տարիներին աշխատել է Երևանի Դպրոցական պիտույքների ֆաբրիկայում, որպես գրաշարտպագրի:

Զգալով իր սրտում հոգեպրականի կոչում, 1953 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգեոր Շեմարանը, որի նոամյա դասարանական բաժինը ավարտել է 1955 թվականին:

1955 թվականի նոյեմբերին ձեռնադրվել է սարկավագ և դարձել Մայր Աթոռի միաբան: 1956 թվականի սեպտեմբերի 23-ին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ, ձեռնադրվել է կուսակրոն քահանա գերաշնորհ Տ. Սահակ Կպիսկոպոս

Սեպտեմբերի 23-ին, երեկոյան ժամերգության վերջում, ստացել է արեղայական վեհար և նշանակվել է Մայր Տաճարին կից եկեղեցա-Հնագիտական թանգարանի վարիչ:

Նորընծա Տ. Հումիկ արեղան Մայր Աթոռի երիտասարդ և նվիրված միաբաններից մեկն է: Ցանկանում ենք նրան արդյունավետ գործունեություն և հաջողություն իր ընդգրկած հոգեոր ժառայության ասպարեզում: